«ՀԱՅԱՆՏԱՌ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Տնօրեն
«АРМЛЕС»
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ
Директор
«HAYANTAR»
STATE NON COMMERCIAL ORGANIZATION
Director

№ 11-10/261

«05» «08» 2024թ.

0011, ք. Երևան, Ա.Արմենակյան 129
0011, Армения, г. Ереван, А. Арменакяна 129
A. Armenakyan 129, Yerevan, 0011, Armenia
Էլ.փոստ՝/e-mail:/эл.почта:info@armforest.am
Հեռ.՝/tel:/тел: 010/65-37-16, 010/65-02-35

ՀՀ ֆինանսների նախարարության
գլխավոր քարտուղարի պարտականությունները
կատարող պարոն Ա. Եսայանին
պատճենը՝
«ՎՄԱԳ» ՍՊԸ-ի տնօրեն պարոն
Խաչատրուր Էմիլզյանին
Հասցե՝ Լոռու մարզ, ք Վանաձոր,
Մյասնիկյան փ 16/1

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱ-ԳՀԱՊՁԲ-2024/43 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ «ՎՄԱԳ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ֆինանսների նախարարության 2024 թվականի հուլիսի 24-ի №03/26-1/15404-2024 գրության համաձայն՝ www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրի «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց ցուցակում ներառված անձանց փոխկապակցված կազմակերպությունների (սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների) վերաբերյալ տեղեկատվության՝ ՀԱ-ԳՀԱՊՁԲ-2024/43 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 2-րդ չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչված «ՎՄԱԳ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 06973717) հանդիսանում է որպես փոխկապակցված կազմակերպություն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «ԱՐՏԱՇԵՍ ՄԵԾ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ 06945472, ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 29.08.2023թ-ից մինչև 29.08.2025թ.) («ՎՄԱԳ» ՍՊԸ-ի իրական շահառուներն են՝ Խաչատուր Էմիրզյան 50%, Արտաշես Ղուկասյան 50%, «ԱՐՏԱՇԵՍ ՄԵԾ» ՍՊԸ -ի իրական շահառուներն են՝ Նատալյա Հակոբջանյան 85%, Արտաշես Ղուկասյան 15%,):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձիք՝ որոնք հայտը ներկայացնելու

օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում...:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 119-րդ կետի 3-րդ ենթակետի՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝

3) ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե՝

ա. տվյալ անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) տասը և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել մյուսի որոշումները,(.....):

բ. նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերը) և (կամ) մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե մասնակիցը ֆիզիկական անձ է) իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին կամ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն(.....):

Ընդ որում՝ Կարգի 121-րդ կետի համաձայն.«մասնակցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակում»:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող (...), ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Համադրելով փաստական հանգամանքները և վկայակոչված իրավանորմերը՝ արձանագրում ենք, որ ՀԱ-ԳՀԱՊՁԲ-2024/43 ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում Ընկերության հայտով ներկայացված հավաստումն առ այն, որ «ՎՄԱԳ» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձիք բավարարում են հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, չի համապատասխանում իրականությանը, քանի որ Ընկերության 50 % մասնաբաժնին տնօրինող Արտաշես Ղուկասյանը 2021 թվականի սեպտեմբերի 17-ից մինչ օրս հանդիսանում է նաև «ԱՐՏԱՇԵՍ ՄԵԾ»ՍՊԸ-ի 15% մասնաբաժնին տնօրինող):

Ընկերության կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «ԱՐՏԱՇԵՍ ՄԵԾ» ՍՊ ընկերության 15 տոկոս բաժնեմասի բաժնետեր լինելով վերջինս համարվում է փոխկապակցված անձ «ՎՄԱԳ» ՍՊԸ-ի հետ: Նշված հանգամանքն ինքնաբերաբար հանգեցնում է Ընկերության գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակում: Հետևաբար, Ընկերությունը՝ գնման գործընթացի շրջանակներում ներկայացնելով իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն՝ խախտել է իր իսկ հայտով ստանձնած պարտավորությունը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ առկա են «ՎՄԱԳ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա պարբերությամբ սահմանված հիմքերը և որոշում եմ՝ Ընկերությանը ներառել նշված ցուցակում:

Հարգանքով՝ Սևակ Մարկոսյան

Գնումների բաժին
Մանե Խաչատրյան
091502405
094642033